

Գրաֆ. Խ. ԱԱԱՎԵԼՅԱՆ

# ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թ Ր Ե Կ Ա Հ

ՀՐԱՄԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒԴԻ ՀԵՂԱԿԱ ԲԱԺՆԵ  
ՅԵՐԵՎԱՆ

1938

9(3) | 1726

1117 April. 1938  
3pm import 5th year sampling  
April 11. 1938

17/1x7 12:59 284

9(3+11)

Պրոֆ. Խ. ՍՍ.ՄՎԵԼՅԱՆ

Ապրիլ 1961 թ.

# ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՅՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

A 32353

ՊՐԱԿ Ա



Խմբ. Հ. ԽՈՒՇՈՑԱՆ

ՏեԽ. Խմբ. Խ. ԽԱԶԱՏՐՑԱՆ

Սրբագրիչ Կ. ՊԵՏՐՈՎՑԱՆ

Դրամիլոսի լիազոր 8.—3580 Պատվեր № 197, Տիրաժ 1500

Հանձնված և արտադրության 10 հունիսի 1938 թ.

Ստորագրված և տպելու 15 հունիսի 1938 թ.

---

Առնկավարժական ինստիտուտի առաքան, Թերևան, Մարգարի փ. № 17

# I.

## Անտիկ նեղինակների վկայությունները նին Արևելքի պատմության վերաբերյալ

Արևմտյան Յեվրոպայի պատմագիտները շատ վաղ սկսեցին հետաքրքրվել ու դրազգին հին Արևելքի, գլխավորապես Առաջավոր Ասիայի, հասարակությունների պատմությամբ։ Սակայն յեվրոպական պատմագիտությունը մինչև 18-րդ դարի վերջն իր տրամադրության ներքո չուներ այնքան ել հարուստ ու արժեքավոր աղբյուրներ։ Հին Արևելքի պատմության միակ աղբյուրներն եյին հանդիսանում էլլասիկ հույն և հումեյական մատենագիրների աշխատությունները և ապա, իբրև տեղական, բռնարեւլյան աղբյուր, հայերեն՝ «Աստվածաշունչ»-ը, իսկ հունարեն և այլ լիգուներով՝ «Թիբլիս» կոչվող գիրքը, վոր հին հրեանների սրբազն մատյանն եր համարվում։

Հունական պատմագիրների շարքում, վորոնք գրել են հին Արևելքի մասին, առաջին աեղն և բոնում իր հնությամբ և հարուստ պատմական տվյալներով։ Հերոզոտը, վոր աղբում եր 5-րդ դարում մեր թվարկությունից առաջ, 485—425 թվերի միջև։ Նրա աշխատության հիմքը ծառայել ե իր կատարած յերկարածոյան ճանապարհորդությունն Արևելքի յերկրներում, ուր նա հնարավորություն ե ունեցել անձամբ ծանոթանալու հին Արևելքի կյանքի հետ կամ տեղում հավաքել տեղեկություններ այդ յերկրների ժողովուրդների պատմության մասին։ Ուստի Հերոզոտի պատմությունն արժեքավոր և այն տեսակեալց, վոր նա տալիս ե իր ժամանակվա, այն հ՝ 5-րդ դարի Արևելքի պատկերը։ Առանձնապես ուշագրավ ու կարևոր են նրա հաղորդումները Աքեմենյան Պարսկաստանի ու Յեզիրապոսի պատմության մասին։

Այնուհետև մեծ նշանակություն ունի Հեկատեյոս Արգերա-

յու գրած աշխատությունը, գլխավորակես Յեղիպտոսի մասին։ Այս պատմագիրն ապրում եր 4-րդ դարի վերջերն ու 3-րդ դարի սկզբները մեր թվարկ, առաջ Յեղիպտոսում տակալին Ոլեքս սանդր Մակեդոնացու ժամանակները; Դժբախտաբար այս բարեխիղն ու ըստ ամենայնի վստահելի պատմագրի աշխատությունները մեզ հասել են վոչ ամբողջովին, այլ պատառիկներով ու քաղաքացիներով։

Չորս դար Հերոդոտից հետո նույնպիսի ճանապարհորդություն եւ կատարել Դիոգորոս Սիկլիացին, վորը Յեղիպտոս եր այցելել 60—58 թ.թ. մեր թվարկ, առաջ Դիօգորոս Սիկլիացու բազմահատոր պատմությունն արժեքավոր են նրանով, վոր հեղինակը ոգտվել է բազմաթիվ հին աղբյուրներից, վորոնք մեզ չեն հասել: Նա նմանապես ոգտվել է Հերեգոտի և Հեկատեյոս Արքերացու պատմություններից, ինչպես և ճանապարհորդության ընթացքում կատարած անձնական դիացություններից: Նրա գրած պատմության մեջ արժեքավոր են մանավանդ հույն պարսկական հարաբերությունների, նաև Յեղիպտոսի ու Փյունիկիայի մասին հաղորդությունը:

Վերոհիշյալ պատմագիրներին գերազանցում եւ Ստրաբոնը, վորն ապրում եր 1-ին դարի վերջերը մեր թվարկությունից առաջ և մեր թվարկության 1-ին դարի սկիզբները: Ստրաբոնի բովանդակ աշխատությունը թեև աշխարհագրական բնույթ ունի, բայց և այնպես պարունակում է նաև հարուստ պատմական տվյալներ իր ժամանակաշրջանի մասին: Ստրաբոնի ընդարձակ աշխատությունը, վոր լրիվ հասել ե մեզ, համարվում է իր գիտական ու սիստեմատիկ շարահյուսությամբ կլասիկ գործ և չի ներկայացնում կուպիֆատիվ մի յերկ, ինչպես որինակ՝ Հեկատեյոսի ու Դիօգորոսի գրածները։

Մի կողմ թողնելով մի շարք մանր ու աննշան հույն մատենագիրներին, պետք է հիշատակել Պլուտարքոսին, վորն արագեն մեր տարեթվարկության ժամանակաշրջանում եր ապրում, այն և 2-րդ դարի առաջին կեսին: Սա ոգտագործել ե նաև այնպիսի գրավոր հին աղբյուրներ, մորոնք մեզ չեն հասել Պլուտարքոսի աշխատությունների մեջ, վորոնք կրում են կենսագրական բնույթ, հին Արևելքի պատմության համար արժեքավոր են նախ՝ նրա աված տեղեկությունները Յեղիպտոսի և մատամբ

Հին պարսիկների կը բանհերի մասին և ապա՝ Ալեքսանդր Մակեդոնացու ու ու Պարսկաստանի մասին պատմական տվյալները:

Վերոնիշեցաւ հույն պատմագիրների շարքին պետք է զատել նաև Ներկու վոչ հույն հեղինակների, վորոնք գրել են հունարեն լեզվով իրենց հայրենիքի պատմությունը: Սրանք նպատակ են ունեցել իրենց յերկրի պատմությունը ծանոթացնել ոտարներին, առանձնապես հույներին, վորոնք Ալեքսանդր Մակեդոնացու շնորհիվ գրավեցին հին արևելյան յերկրները: Այդ պատմագիրներից մեկը Յեգիպտացի Մանեթոնն եր (4-րդ դարի վերջին նախքան մեր թվարկ.), վոր գրել է Յեգիպտոսի պատմությունն, իսկ մյուսը Բաբելոնցի Բերուն եր (3-րդ դարի սկզբին նախքան մեր թվարկ.), վոր շարահյուսել է Բաբելոնի պատմությունը:

Մանեթոնը բաժանում է Յեգիպտոսի պատմական ընթացքը, վոր հաջորդել է տուսավելական-լիդենդար ժամանակաշրջանին, յերեք հաջորդական դարամիջոցների (պերսիոնների), այն եւ Հին թագավորությունն, Միջին թագավորությունն և Նոր թագավորություն: Այդ թագավորությունների յուրաքանչյուրն ել եր հիրթին բաժանվում է դինաստիաների: Այսպիսով Մանեթոնը կազմել եր ներդաշնակ ժամանակագրական մի սփեռմա, վորով Յեգիպտոսի բովանդակ պատմական կյանքն ընդողելիում է 30 դինաստիաներով: Մանեթոնի այդ պատմա-ժամանակագրական սփեռման հիմնականում ընդունված են նաև արդի պատմագիպտության մեջ:

Մյուս հեղինակը՝ Բերուսը գրել է Բաբելոնացի պատմությունը, վոր բավականի հարուստ և պատմական տվյալներով, բայց նրա բերած ժամանակագրական տվյալները այնքան ել վստահելի չեն:

Այս յերկու աշխատությունները մեզ չեն հասել հարազար ընապիրներով, այլ բավականաչափ աղճատված ու կամայական հավելումներով, վոր կատարել են հետագա արտագրողները և մանավանդ ուղարկությունները: Վերջինների մեջ դեր են խաղացել հրեաները, և այսուհետեւ հակաները հավելում:

Թագելով Մանեթոնից ու Բերուսից հրեական ժողովրդի պատմության վերաբերյալ տեղեկություններ, վորոնք, պետք ե առած, բավական սուղ են յեղել այդտեղ, հրեաները միտումնավոր հավելում:

ներ են մուծում, վորպեսզի համաձայնեցնեն «Բիբլիայի» հետ  
և այդպիսով ապացուցեն հրեության պատմական անցյալն ու  
նշանակությունը: Իսկ հակահրեաները Ձ-ըդ դարի վերջերը (ըստ  
մեր թվարկ.) նույնպիսի քաղվածքներով ու միտումնավոր հավելում  
ներով հակահրեական պրոպագանդի համար Մանեթոնին ու Քե-  
րոսին եյն վերագրում իրենց ստրած հերյուրանքները: Ուստի  
Մանեթոնի ու Բերոսի անուններով մեղ հասած աշխատու-  
թյունները վորոշ չափով կորցնում են իրենց նշանակությունն  
իրեւ հարազատ պատմական աղբյուրներ: Սրանց ոգտագոր-  
ծումը հնարավոր է չափաղանց զգույշ մոտեցումով ու քննա-  
զատական վերլուծումով:

Ի վերջո հիշատակենք հրեա պատմագիր Հովսեփ Ֆլավիո-  
սին: Սա զբել է հրեա ժողովրդի պատմությունը, վոր ամբողջու-  
վին հասել է մեզ: Նմանապես հիշատակենք Փյունիկայի պատ-  
մությունը գրող Փիլոնին, վորի աշխատությունը մեղ հասել է  
միայն թերի պատառիկներով:

Ինչ վերաբերում ե հոսմեյական պատմագիրներին, սրանք  
չեն շարահյուսել հատուկ պատմություններ հին Արևելքի մասին,  
այլ բավականացել են նրանով, վոր կամ վերապատմել են հույն  
հեղինակների աշխատությունները, կամ քաղվածորեն մեջ են ըե-  
րել նրանց հաղորդումները: Հետևապես հին հոսմեյական պատմա-  
կան աղբյուրները հիմնական նշանակություն չունեն: Սակայն  
և այնպես հոսմեյական պատմագիրները յերբեմն արժեքավոր  
են հանդիսանում այն չափով, ինչ չափով նրանք հաղորդում են  
այնպիսի հռւնական աղբյուրներից տեղեկություններ, վորոնք  
մեզ չեն հասել:

Դառնանք այժմ հին Արևելքի պատմության տեղական  
այն աղբյուրներին, վոր հայտնի յե «Աստվածաշունչ» կամ  
«Բիբլիա» անունով: Վերջին անունն հունարեն թարգմանու-  
թյուն ե հին հրեական հասսեփարիմ բառի, վոր նշանակում ե  
գրություններ, գրքեր: Բիբլիան, թեև շատ հին ծագումն ունի,  
բայց հիմնականում նա հավաքվել ու խմբագրվել է մեր թվար-  
կության Ձ-ըդ դարում հրեական քահանապետների ձեռքով:  
Ուստի նա տոգորված է կրօնական բնույթով և աստվածաբա-  
նական դատողություններով, վոր ի հարկե թուլացնում է այդ  
աղբյուրի պատմական արժեքը: Նա վոչ միայն «առւրբ գիրք» եր

համարվում հրեաների համար, վորոնք այդտեղ տեսնում եյին աստվածային պատգամներն ու մարդարեական քարոզներն, այդ և «սուրբ զիրք» և ճանաչվում քրիստոնեական յեկեղեցու կողմից, վարպես «Աստվածաշնչի» Հին Կտակարան կոչվող ժամը:

Բիբլիան բաղկացած և առանձին մասերից կամ գրքերից, վորոնք տարբեր ժամանակաշրջաններին են վերաբերում: Ամենահին մասը վերաբերում է մոտավորապես 11-րդ դարին նախքան մեր թվարկ: Բիբլիայի հիմնական մասը կազմում են առաջի հինգ գրքերը, այսպես կոչված «Հնդամատյան»-ը, այլապես նաև «Մովսիսական որենքը»: Բացի զրանից Բիբլիան պարունակում է այսպես կոչված «Պատմական գրքեր», վորոնք տալիս են բավականի արժեքավոր տեղեկություններ, այնուհետև «Մարգարեների գրքեր», կոչվածները և վերջապես՝ «Սաղմոսները»:

Հին Արևելքի պատմության համար իրեն աղբյուրներ կտրուի են «Մովսիսական որենքը», «Պատմուկան գրքերն» ու «Մարգարենական գրքերը»: «Հնդամատյանը», վոր հավատացյալները վերագրում են Մովսես մարգարեյին, ուշագրավ և այն տեսակետից, վոր նա պարունակում է ին արեւելյան որենսգրքերից մեկը: Ընդհանրապես Բիբլիայի այդ մասն անվստահելի յե իր հնությամբ, Քննադատական վերլուծություններն ապացուցում են, վոր «Մովսիսական որենքները» շարանյուսվել են ավելի հետնագույն ժամանակները թե հնագույն և թե ավելի նոր համարվող աղբյուրների հրման վրա: Համեմատաբար ավելի արժեքավոր են «Մարգարեների գրքերը», վորոնք գրվել են ժամանակակիցների ձեռքով և ըստգրկում են հրեական («Եսրայելի») պատմությունն սկած 8-րդ դարից նախքան մեր թվարկ: մինչև Հրեաստանի քաղաքական անկումն Ասորեստանի ու Բարելոնի հարվածների տակ: Այս աղբյուրների թերությունն այն ե, վոր նրանք վերաբերում են սոսկ Հրեաստանի պատմությանն, այն ել չափազանց նեղ քաղաքական հորիզոնով: Այդ կողմից ավելի նպաստավոր տպագորություն են թողնում «Պատմական գրքերը» («Գիրք Սամուելի», «Դիբք թագավորաց» և այլն), վորոնք ընդգրկում են հրեական պատմությունը շրջապատղ քաղաքական աշխարհի կապակցությամբ, սկսած 10-րդ դարից (Ն. Չ. մեր թվ.) մինչև Հրեաստանի անկախության անկումը:

անկումով ամայացած տերիտորիաներում, կամ այդ հին հասարակություններին փոխարինող հետագա, մինչև վերջին ժամանակակաները գոյություն ունեցող զեռւս կուլտուրապես հետամնաց հասարակություններ ունեցող յերկրներում՝ պահպանվել են նույն իսկ հողի յերեսին բազմաթիվ միացորդներ նախորդ փառահեղ կառույցներից. Նշմարվում են հնագիտական հուշարձաններ, վորոնք վկայում են արդեն անեացած ժողովուրդների, վոչչացած պետությունների պատմական անցյալը, ել չենք ասում, վոր ավելի ևս բազմահարուստ ու թանգարժեք հնագիտական մասցորդներ թագնված եյին մնում յերկրի ընդերքում, յերկար ու ձիգ դարեր ավազով ծածկված շեղջակույյաների, հողաբլուրների աակ:

Այդ բոլորը սպասում եյին հնագետների բան ու քլունկին, պատմագետների լուսաբանումներին, վորակեսզի մի որ դարերով լուր ու համբ հուշարձանները վերջապես լիզու տոնեյին, խոսեյին հեռագոր անցյալի մասին, յերբ այդ վայրերում ապրող հասարակություններն ստեղծում եյին կուլտուրական արժեքներ, ապրում եյին սոցիալական բախումներով, քաղաքական ընդվզումներով հարուստ և մեղ համար պատմականորեն խրատալի մի կյանք:

Առաջին հնագիտական հուշարձանները, վորոնք գրավել եյին յեկրոպական պատմագետների ուշադրությունը՝ դա յեկիպատական հիերոգլիֆներն եյին և ապա Միջագետքի սեպածե արձանագրությունները:

Յեկիպատական հիերոգլիֆները տակավին շատ վաղուց հայտնի եյին յեկրոպական գիտականներին: Հին արևելյան, մասնավանդ Յեկիպատոսի հուշարձաններ հատուկենու գտնվում եյին Յեկրոպայում, Դեռ ևս հին հոռմեյական կայսրների ժամանակ Յեկիպատոսից բերվել եր հիերոգլիֆներով ծածկված մի կոթող, վորն իբրև հաղթական զարգարանք կանդնեցըել եյին Հոռմի հրապարակներից մեկում: Ահա այդ հիերոգլիֆներն անվերծանելի եյին մնում մինչև 18-րդ դարի վերջերը: Ուստի անհնարին եր կարդալ այդ նշանագրերը և այն ոգտագործել իբրև Յեկիպատոսի պատմության աղբյուր:

Սեպածե արձանագրությունները հայտնի յեղան յեկրոպական գիտությանը 17-րդ դարում: Խոալացի Պիետրո Դելա Վալլին առեստրական սպատակով ճանապարհորդելիս Առաջավոր

Սմփոփելով հիշյալ դիտողությունները «Բիբլիայի» կամ «Աստվածաշնչի» մասին, կարելի յեւ հանդել այն յեզրակացության, վոր նա ընդհանրապես աղքատ և տեղեկություններով հին Արեւելքի պատմության համար։ Նա գերազանցորեն հրեական ժողովը պետության պատմությում և զբաղվում, իսկ Հրեաստանն ինքնին հին Արեւելքի ընդհանուր պատմության մեջ, քաղաքական իրադարձություններում, կուլտուրական զարգացման մեջ ներգործական դեր չի խաղացել և ավագույն գեղքերում Հրեաստանը հին արեւելյան հասարակությունների մեջ յեղեն և մի ծայրագավառ, վոր ապրել և ինքնամփոփ կյանքով և աշխարհագրորեն հանդիսացել և այն կամուրջն, այն տարանցիկ ճանապարհը, վորով Առաջավոր Ասիան հարաբերություններ և վարել Յեղիպտոսի հետ։

Ահա մեր հիշատակած հունական, հոռմեյական ու բիբլիական աղբյուրներն եյին կազմում այն միակ հիմքը, վորի վրա յելլոպական պատմագիտները մինչև 18-րդ դարի վերջերը կառուցում եյին հին Արեւելքի հասարակությունների պատմությունը Ինչպես կարելի յի հետևեցնել հենց առաջին հայացքից, այդ աղբյուրները թե՛ քանակով և թե՛ վորակով չափազանց անբավարար եյին Առաջավոր Ասիայի պատմության խորքերը թափանցիլու և այն լուսաբանելու գեթ սոտավոր ճշտությունը։

## II

### Հնագիտական պեղումների պատմությունը

Հին Արեւելքի պատմության գրավոր աղբյուրներն, ինչպես տեսանք, ինքնին բավականի աղքատ են և միակողմանի՝ Նըանք ի վեճակի չեն սերկայացնելու հին Արեւելքի հասարակությունների լրիվլատկերը, նրանց սոցիալ-տնտեսական կյանքը. անկարող են լուսաբանել նրանց մեջ տեղի ունեցած քաղաքական իրադրությունները և ընդհանրապես պարզաբանել նրանց զարգացման ուղիները։ Ահա այդ զգալի բացը կարող եյին մասամբ լրացնել հնագիտական հետախուզությունները։ Սակայն մինչև 18-րդ դարի վերջերը հին Արեւելքի հասարակությունների պատմությամբ զբաղվող յեղուական գիտնականներն աչքաթող եյին արել այդ կարելոր աղբյուրները։

Մինչեն հին Արեւելքի նախկին հասարակությունների, յեղբեմնի ահագին պատմական դեր խաղացող պետությունների

Ասիայում այցելում և Պարսկաստան: Այստեղ նա հանդիպում է Աքիմենյան ու Սասանյան հին Պարսկաստանի՝ Պերսեպոլիս մայրաքաղաքի ավերակներն, ուր նկատում ե բենուածն նշանագըշը երբ: Հետաքրքրությունից շարժված, նա արտանկարում է մի քանի արձանագրություններ և բերում Յեղոպա: «Մեզածե գրություն» կամ «սեպագիր» տերմինն ել առաջին անգամ գործածում է հենց ինքը՝ հայանաբերող Պիետրո Դելա Վալլին: Ի հարկե Յեղոպայում այդ գյուտը մեծ հետաքրքրություն առաջացրեց, բայց նրա ուսումնասիրության ու վիրծանության գործը մնում եր տակավին անձեռնմխելի:

Մի կողմից՝ հիերոգլիֆների ու սեպածե արձանագրությունների առեղծվածը և մյուս կողմից՝ հին Արեկելքի նախկին պետությունների յերկրներում հանդիպող պատմական ավերակները խթան հանդիսացան հնագիտական հետախուզումներ ու պեղումներ կատարելու: Խիստ բնորոշ ե բուրժուական պատմագիտառության համար այն պարագան, վոր սկիզբներում հնագիտական պեղումները կատարվում եյին] «Աստվածաշնչի» ու Պաղեստինի, քրիստոնեյության այդ յենթագրյալ հայրենիքի կապակցությամբ: Նույնիսկ Բաբելոնի ու Յեղիպտոսի հնագիտական հետախուզումներն ու պեղումները հետաքրքրություն եյին հարուցում այն չափով, ինչ չափով նրանք առնչություն ունեյին Պաղեստինի, այն և հրեական ժողովրդի պատմության հետ հնագետներից մի քանիսն այնպիսի անհեթեթության ու զավեշտական նպատակների եյին հանգում, վոր հույս եյին տածում այդ պեղումներով գտնել Բիբլիայի բնագիրները կամ Մովսես մարգարեյի գալազանն ու հողաթափը, 10 պատգամների վերը և այլն:

Անդրանիկ պեղումները ձևանարկվեցին Միջազգետքում, իսկ Յեղիպտոսում ավելի ուշ սկսեցին, վորովհետեւ այստեղ բազմաթիվ հնագիտական հուշարձաններ յերեան եյին գալիս յերկրի յերեսին և մեծ ասամբ ծածկված չեյին ավաղակույտերով: Միջազգետքում Բաբելոնի ու Ասորեստանի հին քաղաքներն, իրենց պատմության վերջալույսին ամայանալով ու ավերվելով, դարերի ընթացքում ծածկվեցին ավաղով և գարձան հսկայական հողային բլուրներ: Սրանք մինչեւ այսոր ել ցիրուցան շարանով տարածված են նախկին Բաբելոնի ու Ասորեստանի տերիտորիաներում:

Առաջին անգամ հնագիտական պեղումներ սկսեցին կտապը Ասորեստանում: Այստեղ 19-րդ դարի կեսին հայտնաբերվեցին ասորեստանյան թագավորների ապարանքներ, զորոնց մեջ հայտնի յեն Սարգոս Ա-ինը (8-րդ դար մեր թվարկ. առաջ): Ասուսուընասիրբալինը (9-րդ դ. մեր թվարկ. առաջ): Այնուհետև պեղումներ յեղան հին Ասորեստանի Նինուե մայրաքաղաքի տեղում, ուր յերեան հանկցին ասորեստանյան վերջին թագավոր Ասուըրբանիրավ պալատը, վարին կից գտնվեց նրա հարուստ գրադարանը: Այդ գրադարանը, կամ արխիվը, ներկայացնում եր մի քանի տասնյակ հազար թրծած կավե աղյուսների ժողովածու, վորոնք ծածկված եյին սեպաձե գրություններով: Բաբելոնում և Ասորեստանում սովորաբար գրում եյին այդպիսի հատուկ աղյուսների վրա: Ուշագրավն այն եր, վոր այստեղ պարունակվում եյին թանգարժեք նյութեր նաև բարելական ու տասորեստանյան հնագույն գրականությունից ու գիտությունից յերեան հանվեցին նաև ձեռնարկ-գասադրքեր, վորով ասորեստանյան գրագիրները սովորում եյին սեպագրություն:

Ցեղիպտոսը, վարն անգլիական գաղութ եր, ուշագրության առնվեց հնագիտական պեղումների համար անցյալ դարի 80-ական թ. թ. անգլիական գիտական ընկերությունների կողմէց, յերբ պարզվեցին Միջազգետքի հնագիտական պեղումների հաջող հետևանքները: Այդ պեղումները գլխավորում եյին անգլիացի հնագետ Ֆլինդերս Պետրին և ապա հայտնի Փրանսիացի գիտական Մասպերոն: Այդ ժամանակ եր, վոր հայտնաբերվեցին հին Ցեղիպտական թերե քաղաքի ավերակներում թագավորական ժումբիան (զմուսած դիակներ), Նմանապես մեծ արժեք ունեցան այժմ Տել-Ամառնա կոչվող վայրում հայտնաբերված Ալեւ-Աթոնը, Եխնաթոն թագավորի մայրաքաղաքը: Այդ քաղաքը պահպանվել էր դարավոր ավագաբուրների տակ գրեթե իր նախնական դրությամբ, ուր յերեան են հանվել փողոցներ, ազնվականների ու հարուստների ապարանքներ, նաև չքաղորների խրճիթներ, այգիների հետքեր և այլն: Սակայն ամենառոշագրավն այն եր, վոր այստեղ հայտնաբերվել ե Եխնաթոն թագավորի արխիվը, վոր պարունակում ե բաբելոնյան բևուագրերով կավե աղյուսներ: Այդ աղյուսները բովանդակում են վերոհիշյալ թագավորի գրագրությունները Բաբելոնի, Ասորեստանի, հաթական (հեթիթա-

կան), Միտտանիի թագավորների հետ Նմանապես հարուստ տաճարական արխիվ յերևան և հանվել կախուն ուղիսում:

Անցյալ դարի վերջերը ձեռնարկվեցին հնագիտական ընդարձակ պեղումներ Բաբելոնում: Այդ պեղումները սկսեցին Ամերիկացի գիտնականները Միջազգետքի կենտրոնում հին բարելական Նիպուր քաղաքի վայրում: Այդտեղ հայտնաբերվեցին նյութական կուլտուրայի չափազանց հարուստ իրեր, զբաղարան-արխիվ, շենքեր և այլն, մանավանդ մի մեծ տաճար, վոր ամբողջ Բաբելոնաստանի կենտրոնական սրբավայրն եր համարվում: Նույնպիսի հաջող հետեանքներ ունեցան հին կաղաշ քաղաքի պեղումները, վորոնց շնորհիվ հայտնաբերվեցին մի շարք շենքեր ու մի քանի տաճանյակ՝ հազարների հանող կավե աղյուսներ տնտեսական հաշիվներով:

Ամերիկացիներին հետևելով՝ գերմանացիներն ել ձեռնամուխ յեղան պեղումների, գլխավորապես յերեք վայրերում — բուն Բաբելոն քաղաքում, Ասորեստանի մայրաքաղաք Ասսուրում և Շուրուպակ քաղաքում: Շուրուպակի ավերակներում զանվեցին հնագույն Բաբելոնյան սեպազրով կավե աղյուսներ, վորոնք պարունակում են Շուրուպակի տաճարի տնտեսական հաշիվները: Բաբելոնի պեղումները բացին հին հաչակավոր մայրաքաղաքի ամբողջ պատճեններով: Ասուրի պեղածոներից ամենառաջազրավ և տեղական տաճարի գրադարանը, վորն ավելի հին և քան թի Ասսուրբանիրավի գրադարանը:

Չափազանց մեծ նշանակություն ունեցավ հին Արևելքի պատմության համար Փոքր Ասիայում՝ նախկին հաթական, կամ հեթիթական, պետության վայրում կատարված պեղումները: Այժմյան Թյուրքիայի մայրաքաղաք Անկարայից 200 կիլոմետր հեռավորության վրա գտնվող ներկայումս Բողադքեռյ կոչված գյուղի բլուբներում գերմանացի գիտնական Վինկերի կողմից հայտնաբերվեցին հին հաթական մայրաքաղաքի մնացորդներ, ինչպես և հաթական թագավորների հարուստ արխիվ: Իսկ այժմյան Կեսարիա (Թյուրքիա) քաղաքի մոտ յերևան և հանվել յերբորդ հազարամյակի (Ա. ք. մեր թվարկ.) ասորեստանյան գաղութներից մեկի արխիվը:

Հին Արևելքի պատմության համար մեծ արժեք են ներկա-

յացնում Փրանսիացի հնագետ Ժակ Մորգանի պեղություններն այժմ մյան Իրանի արևմելյան ծայրում գտնվող հին Սուզայի՝ նախակին ելամի մայրաքաղաքի վայրում: Այստեղ ի հայտ բերվեցին հարուստ կերամիկա (կավագործական արտադրություններ) գեղարվեստական գունավոր նկարներով և, վոր ամենագլխավորն է, Բաբելոնյան Համմուրապի թագավորի որենքները (2067—2025 թ. թ. ն. ք. մեր թվարկ.) քարե կոթողի վրա փորագրված:

Ինչ վերաբերում և Պաղեստինի, Սիրիայի և Փյունիկիայի պեղություններին, նրանք աննշան արդյունքներ ունեցան: Բնորոշ ե, վոր հին Արևելքի պատմության համար վորոշ նշանակություն ունեցող Անդրկովկասը ցարական տիրապետության շրջանում վոչ մի սիստեմատիկ հնագիտական ուսումնասիրության չենթարկվեց, չնայած, վոր 19-րդ դարում այստեղ հետզինա հայտնաբերվեցին դիպվածական գյուտերով բացառապես յերկրի յերեսին մի քանի տասնյակ սեպագիր խալքական (ուրարտական) հուշարձաններ, վորոնք մեծ լույս են սփռում հին խալքական, կամ նախկին Վանյան պետության մութ հջերի վրա: Զեռնարկվել եր միայն, անցյալ դարի 90-ական թվականներին, հնագիտական արշավ պրոֆ. Նիկոլակու և Խվանովսկու մասնակցությամբ, այժմյան խորհրդացին Հայաստանի սահմաններում ուսումնասիրելու խալքական հուշարձանները: Սակայն այդ գիտարշավը, կարծառել լինելով, ավելի շուտ հետախուզական, քան թե սիստեմատիկ ուսումնասիրական բնույթ եր կրում:

Զափաղանց բնորոշ ե, վոր այս հնագիտական հետազոտություններն ու պեղությունները, վորոնք առավելապես մեծ թափով զարգացան 19-րդ դարի վերջերը և 20-րդ դարի սկզբները, հետեւնք են իմակերպալիստական գաղութային քաղաքականության, վոր մզում եյին փոխադարձ մրցումով Անդրկան, Թրանսիան, Գերմանիան և սրանց հետեւց Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու ցարական Ռուսաստանը: Եեվրոպական իմապերիալիզմն իր տնտեսական ու քաղաքական նպատակադրություններն ուղղում եր գեպի Արևելք, ինչպես գերմանացիներն եյին առում Drang nach asten — խորանք դեպ արևելք: Փոքր Ասիան, Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը, Յեփիստոսը, Պարսից ծոցը դարձել եյին իմակերպալիստական պետությունների կատաղի հակամարտության ասպարեզներ նրանց գաղութային եկտպանսիայի ու Փինանսական

կապիտալի զահատակությունների համար։ Ահա բուրժուական հնագիտությունն ել դառնում եր նրանց ձեռքին մարտական մեջոցներից մեկը, վոր ծառայում եր իմպերիալիստական քաղաքականությանը, քողարկելով պատմական գիտության կեղծ շպարով։

Այս բոլոր հնագիտական աշխատանքներն իմպերիալիստական պատերազմի բռնկումով՝ ժամանակավորապես դադարեցին։ Մակայն պատերազմի վախճանից հետո յիշ վորոշ ժամանակ տիրող տնտեսական ճգնաժամի հետևանքով հնարավորություններ չկայից վերստին ձեռնամուխ լինելու հնագիտական պեղումների։ Հնագիտական աշխատանքները վերսկսվեցին միայն 1919 թվականից հետո, ի հարկե վոչ այն մեծ ծավալով ինչպես առաջ եր։ Այսուամենայնիվ ձեռնարկված պեղումներն ունեցան հին Արեւիլքի պատմության համար նշանակալի հետևանքներ։

Պատերազմից հետո միջազետքում հին Բարելոնի Ուր քաղաքի վայրում ձեռնարկված պեղումները հայնտաբերեցին նյութական կուլտուրայի հարուստ իրեր բացվեց տաճարի շինք իր աշտարակով (գիկլուրատ)՝ մետաղե բարձրաքանդակներով զարդարված, արձաններ, թագավորական դամբան, վորակեղ թագավորի և թագուհու հետ թաղված եյին մի քանի տասնյակ այր ու կին, վոր անշուշտ մարդկային զոհեր եյին, և բացի այդ՝ մի շարք արձանագրություններ։ Բարելաստանի հյուսիսային մասում գտնվող հնագույն Կիշ քաղաքի պեղումներով յերևան հանդիցին բազմաթիվ կավե աղյուսներ հիերոզիլիֆներով, տաճարներ և այլ շենքեր։

Եեղիպտոսում պեղումները կենտրոնացվել եյին գլխավորապես հին Թերե մայրաքաղաքի շրջակայքում։ Այստեղ բացվեց Տուտանխամոն թագավորի փառահեղ դամբանը, վորն իր հարուստ պարունակությամբ և, վոր գլխավորն և, իր լավ պահպանված վիճակով ահազին սիհնացիա առաջացրեց հնագիտների ու պատմագետների շրջաններում։ Այստեղ հայտնաբերվեցին, բացի Տուտանխամոնի մումիայից ու թագման պարագաներից, արվեստի բազմաթիվ արտադրություններ, նմանապես, թեև վոչ այնքան շատ պապիրուսներ, վորոնք կազմում եյին մի ընտանեկան արքիվ։ Հնագիտական պեղումներ կատարվեցին Հնդկաստանում, Չինաստանում և դարձյալ Պաղեստինում ու Փյունիկիայում։ Այս

անգամ Փյունիկիայի պեղումները պսակվեցին մեծ արդյունքներով: Հին Բիբլոս քաղաքի վայրում յերկան յեկան բազմաթիվ իրեղենն ու գրավոր հուշարձաններ, վորոնք մեծ լույս են սփռում չին Արեգելքի այս յերկրամասի պատմության վրա և վկայում են Յնդիպտոսի կուլտուրական ազդեցիկ դերի մասին:

Հետպատերազմյան հնագիտական պեղումների պատմության մեջ ամենանշանավորն է 1933 թ. գերմանացի գիտնական Հերցֆելդի հայտնաբերած բազմահարուստու թանգարժեք արխիվը՝ հին Պարսկաստանի Պերսիպոլիս մայրաքաղաքից: Այդ արխիվային նյութերն, անտարակույս, մեծ դեր են խաղալու հին Արեգելքի պատմության մութ մնացած եջերը լուսավորելու համար: Տարաբաղդաբար այդ նյութերը դեռ հրապարակված չեն:

### III

Հին գրավոր նիւատակարանները յեվ նրանց վերծանումը

Մենք ահաանք, վոր սկսած 19-րդ դարից հնագիտական հետախուզումների ու պեղումների շնորհիվ, վորոնք շարունակվում են տակավին ներկայումս ել ամբարվել և ահագին նյութ, բաղակացած իրեղեն հուշարձաններից ու գրավոր հիշատակարաններից: Այդ նյութերը թանգարժեք ազբյուրներ են հին Արեգելքի պատմության ուսումնասիրության համար, վորոնք գալիս են վճռ միայն լրացնելու հին հունական ու բիբլիական աղբյուրներն, այլ և հիմնովին վերակառուցելու հին Արեգելքի հասարակությունների պատմությունը: Ուստի գիտնականները մեծ թափով ձեռնամուխ յեղան այդ ազբյուրների ուսումնասիրությանը: Ցեղեն հնագիտական իրեղեն հուշարձանները հենց սկզբից հնարավորություն տվին կառուցելու նյութական կուլտուրայի և ժամանակական ու տնտեսական զարգացման պատմությունը, ապա գրավոր հուշարձաններն, այն և՛ հիերոգլիֆներն ու սեպագրությունները, յերկար ժամանակ գետ եյին ընկնում այն մեծ գժվարության, վոր անհնարին եր նբանց ընթերցումը: Գիտականներին հայտնի չեք թե այդ արձանագրությունների լինուն և թե այդ գրերի իմաստն ու նշանակությունը. արդյո՞ք այդ գրերն առանձին տառանիշեր եին, թե բառանիշեր, կամ գաղափարաղեր: Այս գրավոր հուշարձանների ընթերցումն ավե-

Ա ակտուալ արժեք ուներ, քանի վոր գալիս եր կենդանի լեզվով  
խոսեցնելու այն իրեղին հուշարձանները, վորոնք, չնայած հնաւ  
գիտական ուսումնասիրություններին, այնուամենայնիվ համբ  
ու պապանձ եյին և կենդանի կերպով չեյին պատմում հին Արևել  
քի հասարակությունների ապրումներն ու կարգացումը:

Սնարաժեշտ եր ուրեմն վերծանել այդ առեղծվածային գըշ  
րությունները, կարդալ այդ անհայտ լեզուներով հիշատակարանո  
ները, վորպեսզի հնարավոր լինի նրանց պատմագիտական ոգտա  
գործումն: Իսկ վերծանության միակ բանալին կարող եր լիներ  
միայն յերկու պայմաններում, ա) ունենալ զուգահեռ տեկստ,  
զրված վորեւ հայտնի լեզվով ու տառերով, բ) յերկու զուգահեռ,  
այսինքն անհայտ ու հայտնի, արձանագրությունների մեջ լին  
նեն միևնույն հատուկ անուններ: Ահա այդ անհրաժեշտ հիմնաւ  
կան պայմանները յերկար ժամանակ բացակայում եին:

Առաջին վերծանման բաղար վիճակվեց Յեղիպտական հիե-  
րոգլիֆներին: Այս պարագան դիպվածորեն կապ ունեցավ Նառ  
պոլեոն Բոնապարտի արշավանքի հետ Յեղիպտոսը նվաճելու նը-  
պատակով: 1799 թ. Փրանսիական զինվորները խրամատներ փոռ  
ցիլիս Ռասետի քաղաքի մոտ (Յեղիպտոսի հյուսում), զուրս  
հանեցին մի մեծ սկ քար, վորի վրա նկատեցին ինչ վոր արձառ  
նագրություն: Զինվորներին պատվիրված եր, վոր արձանագր-  
ություններով քարեր և կամ այլ հնադիտական իրեր հայտա-  
բերելիս՝ անմիջապես հաղորդեն իրենց հրամանատարությանը,  
Ահա այդ քարը հանձնվեց զինվորական շտաբին, վորի զորավարը  
լինելով կրթված անձ, իսկույն նկատեց վոր արձանագրությունը  
բաղկացած և յերկու բնագիր տեկստից՝ հիերոգլիֆներից և զու-  
գահեռ հունարեն տեկստից: Զինվորական շտաբը հիշյալ քարը,  
վոր այնուհետև սկսեց կոչվել Ռասետյան, ուղարկեց Ֆրանսիա:  
Այդ գյուտի լուրն իսկույն տարածվեց ամբողջ Յեղիպտայում և  
մեծ իրարանցում առաջացրեց գիտական շրջաններում: Այս նոր  
գյուտի հիման վրա, յերբ հունարեն տեկստի տակայությամբ  
արդեն վորոշ բանալի կար, ձեռնադուխ յեղան վերծանելու Ռասե-  
տյան քարի յեղիպտական հիերոգլիֆյան տեկստը:

Այդ վերծանության փառքն ու պատիվը սակայն պատկա-  
նում և Փրանսիական յերիտասարդ գիտական Ֆրանսուա Շամ-

պոլիտնէն, չնայած վոր նույն վերծանության աշխատանքով  
զբաղվեց նաև անգլիացի գիտնական Ցունզը. Այն հանդաւանքը  
վոր Ռասետյան արձանագրությունը յերկու լեզվով եր գրված՝  
յեգիպտերեն և հունարեն, հնարավորություն ընձեռնեց Շամպու-  
լիոնին բավականի արագ կատարել հիերոգլիֆների վերծանումը,  
Կարդալով հունարեն տեկստը, նա պարզեց, վոր այդ արձանա-  
գրությունը վերաբերում է Յեգիպտոսի պատմության 2-րդ դա-  
րին մեր թվարկ. առաջ (196 թ.), այն ե՛ թագավոր Պտղիմա-  
յոս 5-րդի ժամանակին և պարունակում է քրմական մի գեկ-  
րետ ի պատիվ թագավորի. Շամպոլիոնը, գիտենալով հունական  
մի հին պատմագրից, վոր յեգիպտական արձանագրություննե-  
րում թագավորների անունները սովորաբար պարփակված են  
լինում յերկարագուն կլոր շրջանակների մեջ, հենց դրանից ել  
սկսեց իր վերծանական աշխատանքը. Հիրավի, Ռասետյան ար-  
ձանագրության յեգիպտական բնագրում նա գտավ շրջանակի  
մեջ ամփոփված մի բառ, վորին համապատասխանում եր հունա-  
րեն բնագրի մեջ Պտղիմայոս անունը. Այսպիսով նա կարո-  
ղացավ պարզել առաջին հերթին հիերոգլիֆյան և տառանշան-  
ների հնչյունագրերը. Սակայն Յեգիպտական բնագրում Պը-  
տղիմայոս անունը գրված եր առանց եռ ու վերջին Ո ձայնա-  
վորների. Շամպոլիոնը միանգամայն ճիշտ ապացուցում եր այս  
հանդամանքը նրանով, վոր ընդհանրապես սեմիտական լիզունե-  
րում, վորին պատկանում եր նաև յեգիպտերենը, բառերի մեջ  
չեն գրում ձայնավոր տառերն, այլ միայն բաղաձայները. Ռա-  
սետյան արձանագրության մեջ Պտղիմայոս բառի Շամպոլիոնի  
առաջին վերծանումը հետագայում միանգամայն հաստատվեց,  
յերբ 1815 թ. նույն Յեգիպտոսում Ֆիլ կղզում (Յեգիպտոսի հա-  
րավում), հայտնաբերվեց մի այլ յերկլեզվյան արձանագրություն,  
նույնպես յեգիպտերեն և հունարեն. Այստեղ բացի Պտղիմայոս  
անունից կար նաև կլոպատրա թագուհու անունը. Այս վերջին  
անունի վերլուծումով հնարավոր յեղավ գտնել մինչ այդ պակա-  
սող ե հնչյունի տառանիշը.

Այս հաջողություններից խրախուսվելով, Շամպոլիոնը շա-  
րունակեց իր աշխատառությունն, այն ե՛ պարզել մյուս տառանի-  
շերը, վորին մեծ չափով ոժանդակեց Կոպտական լիդվի Կիրա-  
սումը. Կոպտերը՝ մեր ժամանակակից Յեգիպտոսի քրիստոնեա-

շած հին բնիկ յեգիպտացիների մասցորդներ են, վորոնք գրում  
են հիմնականում հունական ծագում ունեցող տառերով։ Շամպոլ-  
լիոնն, իր առաջազրած նպատակի համար լավ ուսումնասիրելով  
այդ լեզուն, կարողացավ վերջապես վերծանել հիերոգլիֆյան  
մյուս տառանշանները։ Այսպիսով նա հիմք գրեց Յեղիպտաբա-  
նությանը, վոր գժբախտաբար նա անկարող յեղավ ավարտել  
վաղահաս մահվան պատճառով, թեև արգեն զրել եր հին յեգիպ-  
տական լեզվի քերականության առաջի փորձը։

Շամպոլիոնի մահից հետո նրա գործը մեծ հաջողությամբ  
պսակեցին գերծանացի գիտնականներ՝ Լեպսիուսը և Բրուգչը,  
վորոնք կազմեցին յեղիպտերենի բառարան և հորինեցին քե-  
րականություն։ Այնուհետև անցյալ դարի 70-ական թվականնե-  
րին ֆրանսիացի պատմագետ ու յեգիպտագետ<sup>3</sup> Գ. Մասպիեռն  
հայտնի յեղավ յեղիպտական զրավոր հիշատակարանների բազ-  
մաթիվ թարգմանություններով, վորոնք թանգարժեք աղբյուր-  
ներ հանդիսացան հին Յեղիպտոսի պատմության համար Յեղիպ-  
տագիտությունն սկսեց մեծ հետաքրքրությամբ զարգանալ յեղ-  
բուպական մի շարք յերկրներում, որը հանդես յեկան այդ մաս-  
նագիտության ականավոր գիտնականներ։

Ծուսաստանումն ել յեղիպտագիտությունն ունեցավ անվա-  
նի գիտնականներ, վորոնցից հիշատակենք Վ. Ս. Գոլենիշչին,  
Ռ. Լեմմին և մանավանդ Բ. Տուրայեվին։ Վերջինս հիմնեց յեղիպ-  
տագիտության ուսումնական դպրոցը և ունեցավ մի շարք մասնա-  
գիտացած աշակերտներ, վորոնց թվումն են ներկայումս խորհրդ-  
դային Ծուսաստանում այդ մասնագիտությամբ զրադվող ակա-  
դեմիկոս Վ. Մարուվեն։

Դառնանք այժմ ասորաբարելական սեպածե արձանագրու-  
թյուններին, վորոնց վերծանումն ավելի դժվար եր և ամենի ուշ  
իրազորձվեց։ Այսուղ ել բացակայում ելին զուգահեռ հայտնի  
լեզվով արձանագրություններ, վորոնք ծառայել են վորպես վեր-  
ծանության բանալի։ Ասորաբարելական թևեռագրություն-  
ների վերծանման դորձն ընթացավ այլ ուղիով։ Այսուղ վեր-  
ծանության նյութ ծառայեցին հին պարսկական վերծանման  
հետևանքները, վոր նույնպես դժվար ու յերկարատև աշխա-  
տանքի արդյունք էին։

առաջին աեղեկությունը սեպածե գրությունների մասին

Յեվրոպա բերեց, ինչպես արդեն վերն ասել ենք, իտալացի վառ ճառական Պիետրո Դելա Վալեն 1621 թ., Նա առևտրական նպաստակով ճանապարհորդում եր Առաջավոր Ասիայում և, այցելելով Պարսկաստան, առիթ ունեցավ տեսնելու Պերսեպոլիսի ավերակ ները, վոր հին Պարսկաստանի Աքմենյան և ապա Սասանյան դիւնաստիաների մայրաքաղաքն եր Նա արտանկարում ե այդ արաձանագրություններից մի քանի նմուշներ, վորոնք մեծ հետաքրքրություն են շարժում յեվրոպական գիտնականների մեջ: Սակայն այդ բևեռագրությունների ուսումնասիրությանն ձեռնամուլս յեղան միայն 18-րդ դարի վերջերը, յերբ Յեվրոպա բերվեցին առեղծվածային արձանագրությունների ճիշտ ու մանրամասն պատճենները: Այդ կողմից հայտնի յեղավ դաշնիացի գիտնական Կարստեն Նիբրուրը, վոր հատկապես ուղևորվեց դեպի Պերսոպոլիս (1765 թ.) և այստեղ հանեց մի քանի նոր հայտնաբերված բևեռած արձանագրությունների պատճեններ:

Այդ արձանագրությունների նախնական ուսումնասիրությունները պարզեցին, վոր Պերսեպոլիսի բևեռագրությունները յերեք լիզվով եյին: Այդ արձանագրությունները հաջորդում եյին յերեք ինքնուրույն պարբերություններով, վորոնք բաժանված եյին իրարից ազատ տարածություններով: Յուրաքանչյուրն այդ յերեք պարբերություններից գրված եր տարբեր սիստեմի բերվեանիշերով, ուստի յեղբակացնում եյին, վոր այդաեղ յերեք առանձին լեզուներ են: Այնուհետև պարզվեց, վոր առաջին պարբերությունը գրված ե այբբենական սիստեմով, այսինքն՝ հնչյունական տառերով, յերկրորդ պարբերությունը՝ վանկային նշանագրերով և վերջապես յերրորդ պարբերությունը՝ գաղափարագրերով, իգեագրամմային սիստեմով:

Այս նախնական ուսումնասիրական քայլերից հետո դիմեցին արձանագրությունների վերծանությանը, և այդ սկսեցին այն պարբերությունից, վոր գրված եր այբբենական տառանիշերով: Վերձանության հիմքը զրեց գերմանացի գիտնական Գրոտեֆենը 19-րդ դարի սկզբներին: Ուսումնասիրության նյութ առնարկ յերկու ամենակարճ արձանագրությունները, Գրոտեֆենը նկատեց տառերի յերկու դուգաճեռ նույնանման խմբեր և յինթագրեց, վոր այդ արձանագրություններում պետք ե լինեն Աքմենյան թագավորների տիտղոսը: Ուստի Գրոտեֆենը յեղ-

բակացրեց, վոր այդտեղ հաճախ հանդիպող նույնանման նշանագըրերի խումբը պետք է նշանակի «թագավոր» բառը, իսկ նրան նախորդող բառը, վոր արդեն տարբեր եր յերկու արձանագլություններում, պետք ել լինի թագավորի անունը՝ Մեկնելով արդեն հին գրականության մեջ հայտնի, Սասանյան թագավորների տիտղոսագիր Փորմուլայից, «(այս ինչ անուն) մեծ թագավոր, թագավորների թագավոր, (այս ինչ անուն) թագավորի վորդի, Սասանյանց, նա կարողացավ գտնել, վոր Պերսեպոլիսի այդ արձանագրություններում նույն ձեւի տիտղոսներ են: Այդ համեմատական վերլուծումով Գրոտեֆենդը կարողացավ արհեստականուրեն ստեղծել զուգահեռ յերկլեզվական արձանագրություն և ըստ այնու ել վերծանել հին պարսկական սեպագիր տառանիշերն ու հանգել պայմանական հետևանքների: Հիրավի Գրոտեֆենդի վերծանած 20 տառերից, ինչպես հաստատվեց նրա մահից հետո, միայն 10 տառերը ճիշտ եին լուծված: Սակայն այդ ել մեծ նըլվաճում պետք է համարել: Գրոտեֆենդի հիմք դրած վերծանական սիստեմը շարունակեցին նրա մահից հետո ուրիշները և դործը պատկեցին հաջողությամբ:

Հետագա վերծանողական ուսումնասիրություններում մեծ անուն վաստակեց անդիքացի գիտնական Ռառուլինսոնը, վոր Պարսկաստանում հայտնաբերեց Բեհիստունի, կամ Բիսութունի, ընդդարձակ արձանագրությունը, բաղկացած 400 տողից: Այդ արձանագրությունը պատկանում է Արքմենյան թագավոր Դարեհ Լին, վորն այդտեղ պատմում է իր գահ բարձրանալու և ապատամբություններ ճնշելու մասին: Արձանագրությունը բաղկացած եր յերեք պարբերություններից, վորոնցից առաջինը պարսկերեն եր: Ահա այդ առաջին մասը Ռառուլինսոնին հաջողվեց ամբողջովին վերծանել (1836 թ.) և պարզել հին պարսկերենի տառանիշերը: Այդ առաջին պարբերությունը, վոր արդեն վերծանվել եր, խաղաց ասորա-բարելուկան սեպագրերի վերծանության համար նույն գերն, ինչ վոր Ռասետյան արձանագրության հունարեն տեկան յերկապիֆների վերաբերմամբ:

Հիրավի մի շարք ուսումնասիրությունների ու հնագիտական հետախուզությունների շնորհիվ հաստատվեց, վոր Բեհիստունի արձանագրության յերրորդ պարբերությունը գրված եր ասորա-բարելուկան սեպագրերով: Այս յերկապացությունից հետո Ռառու-

լինսոնը և մի քանի ուրիշ զիտնականներ, յուրաքանչյուրն ինքը նուրույն կերպով ձեռնարկեցին այդ պարբերության վերծանամանը, հաջողությամբ կիրառելով նույն մեթոդը, փորով զեկավարվիլ եր Շամպուլիոնը: Յեվ անա 1857 թ. չորս ասորագեաններ՝ Ռառըլինսոն, Տալլուտ, Հինքս և Ապլիքրատ կոնգրանի Ասիտական ընկերության հանձնարարությամբ ու պատվիրով յերեք որվա ընթացքում, իրարից միանգամայն անկախ ու առանձնակի, զրեթե միատեսակ թարգմանեցին իրենց ուղարկված ասորական մի արձանագրություն: Այս հանգամանքը յեկավ հաստատելու, վոր արդեն վերջնականութեն պարզված և լուծված եր ասորաբարելական սեպագրության սիստեմը:

Ինչ վերաբերում է Բենքստունի արձանագրության յերկարող պարբերությանը, նա տակավին վերծանված չե: Մի շարք յելլոպական գիտնականներ գտնում են, վոր նա գրված և համական լեզվով: Ալազգեմիլու Ն. Մատի կարծիքով այդ արձանագրության լեզուն հարեթական ե, ազգակից կովկասյան լեզուներին՝ հայկականին, վրացականին և այլն:

Բենքստագրերի հետագա ուսումնասիրություններով պարզվեց, վոր բնեուագիրն ամելի հին ե, քան բարեկական սեմիտական կուլտուրան: Այդ նշանագրերի հնարողները յեղել են սումերերը, մի ժողովուրդ, վոր ապրում եր Բարեկաստանի հարավային մասում: Բարեկական լեզվի ուսումնասիրության գործն ամփոփեց գերմանացի գիտնական Դիլիչը, վոր կազմեց այդ լեզվի քերականությունն ու բառարանը: Խոկ սումերերական լեզվի ուսումնասիրության հիմքը դրեց Գրանսիացի գիտնական Տյուրո-Դանժենը:

Ուսումնատանն ել հետ չմնաց ասորաբարեկան բնեուագը րերի ուսումնասիրության ասպարիզում: Այսանդ իրենց աշխատություններով հայտնի յեղան Վ. Գոլենիչներ, Մ. Նիկոլսկին, Ն. Մատը, Վ. Շիլիցկոն:

Ասորաբարեկան ու հին պարսկական բնեուածե արձանագրությունների շարքին են պատկանում նաև խալդական կամ ուրարտական հուշարձանները, վորոնք սկսվել են հայտնաբերվել 19-րդ դարի ընթացքում հին պատմական հայաստանի սահմաններում: Առաջինը՝ գերմանացի պրոֆ. Շուլցն եր, վոր Գրանսիական կառավարության առաջադրությամբ ու ծախքերով 1827 թ. ուղեռորդեց Վանի շրջանը և կարողացավ մեկ տարվա ընթացքում

ընդորինակել մոտ 38 խաղական արձանագրություններ: Այսուհետու մինչև ներկա տարիները թե գիտաբշավներով և թե դիպովածորեն շարունակվում են յերեալ նորանոր սեպաձե խաղական արձանագրություններ, վորոնք սկսում են լուսավորել Հայաստանի առևնահին ու խաղարով սքողված ժամանակաշրջանի պատմությունը: Այժմ 100-ից ավելի հասնող այդ արձանագրություններն արգեն թարգմանված են:

Խաղական բևեռագրերի վերծանումն այնքան ել դժվարությունների չհանդիպեց: Առաջինը, Վար հիմնավորապես վերծանեց խաղական բևեռագրերը՝ անգլիացի գիտական Սեյսն կը, անցյալ գարի 80-ական թվականների սկիզբներին: Խաղական բևեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են շատ գիտականներ, սրանց մեջ, բացի Սեյսնի հայտնի յին գերմանացիներ՝ Լինդան-Հառլապտ, Վ. Բելգ, Ֆրիդրիխս, ուսուներ՝ Մ. Նիկոլսկի, Ն. Մառ, Ի. Մեշչանինով, հայերից՝ Սանտալյան:

Հիերոգլիֆյան նշանագրերի ու բևեռագրերի վերծանության ու թարգմանության փորձերն արդին մշակել եյին վորոշ գիտական յեղանակներ ընդհանրապես արձանագրությունների ուսումնասիրության համար, յեղանակներ, վորոնց հիմքը զրել են Շամպուլիոնն ու Գրոտեֆենովը: Մեր ժամանակակից վերջին վերծանական ուսումնասիրությունները վերաբերում են արդեն հաթական կամ հեթիթական արձանագրություններին, վորոնց մեծ մասը գրված ե ասորա-բարելական բևեռածե նշաններով, իսկ մի մասն ել հիերոգլիֆներով: Հեթիթական հուշարձանների բևեռագրերը վերջնականորեն վերծանեց ու թարգմանեց 1915 թ. չեխական գիտական Հրովին, վորին հաջողվեց մի քանի տարի առաջ վերծանել նաև հեթիթական հիերոգլիֆյան նշանագրերը: Գրտնական Հրովին կազմել են նաև հեթիթական լեզվի քերականություն ու բառարան:

## IV

### Կարեվորագույն վավերագրեր

Սեպաձե ու հիերոգլիֆյան արձանագրությունների վերծանումներն, ընթերցումները և ուսումնասիրությունները չափազանց լայն հորիզոններ բացին հին արևելքի պատմության մեջ:

Այդ հուշաբձանները, վորոնց հնությունը մի քանի տասնյակ հաւրյուրաժյակների յի հասնում, անշուշտ ավելի հիմնական ու արժեքափոր ազգյուրներ են համեմատաբար կլասիկ և հին ժամանակիրների պատմազբական յերկերի հետ, վորոնք, ավելի հետնագույն դարերի գործեր լինելով, չեն կարող մեծ մասամբ վրատահելի համարվել և հեռու յեն անցած դարերի իրականությունը ճշգրիտ վերաբարպելուց: Սեպաձեւ ու հիերոգլիֆյան արձանադրությունների ընթերցումը, հնարավորություն տվեց հին Արեգիլքի պատմությունն ուսումնասիրի այնպիսի ազգյուրների հիման վրա, վորոնք հնագույն իրականությունից բջիջող իսկական դոկումենտներ, թանգարժեք վավերագրեր են: Այդ վավերագրերն հարազատ գույներով պատկերացնում են հին Արեգիլքի հասարակությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական բովանդակ կյանքը:

Այդ բողոքաթիվ վավերագրերի շարքում ամենից առաջ պետք է հիշատակել հին Արեգիլքի միջազգային դիվանագիտական գրագրությունները, վորոնք լույս են սփռում այն ժամանակավայեսությունների քաղաքական դերի ու նշանակության վրա: Այդ վավերագրերը, վորոնք հայտնաբերվել են Տիգ-Ամարնայի ու Բողազ-քյոյի հնագիտական պեղումներով, պատկանում են թագավորական (Եթուաթոնի), իսկ յերկրորդը՝ հեթիթական թագավորներին: Այս վավերագրերում, բացի անմիջական դիպումատիական գրագրություններից արևելյան միապետների միջեւ (Բարեկոնի, Սոսրիսանի, Միտանի, Հեթիթների, Կիպրոսի, Պաղեստինի և այլն), պարունակվում են նուև հետաքրքիր միջազգային գաշնագրեր: Այս բոլորին պետք է միացնել նաև Ասորեստանյան պետական պաշտոնյաների ու մարդացին կուսակալների գեկուցագրերը ներքին ու արտաքին քաղաքականության մասին:

Հին Արեգիլքի քաղաքական պատմությանն են վերաբերում նաև այն գրությունները, վորոնք տարեգրություններ են, այս սինքն վաշ թե պատմագրական գործեր արդի տուումով, այլ զանազան միապետների կամ ամբողջական դիմաստիաների թագավորության վերաբերյալ կարևոր քաղաքական ու պետական գեղաքերի ու անցքերի ժամանակագրական շարահյուսություն: Այդպիսի հնագույն տարեգրություններ մեզ հասել են Բարեկոնից, Յեգիթպոսից, Հըհաստանից, Փյունիկայից և այլն:

Վերջապես հին Արևելքի քաղաքական պատմության ուշաւ գըրավ զավերագրեր են հանդիսանում այն բազմաթիվ արձանաւ գրությունները, վորածեղ հին արևելյան թագավորները, շատ անդամ նույնիսկ պարձենկրտ հոխորտությամբ պատմում են իրենց վարած հաղթական պատերազմների ու ավարառումների մասին։ Այդ կողմից աչքի յեն ընկնում յեգիպտական, ասորեստանյան, հեթիթական ու խալդական թագավորների արձանագրությունները։

Հին Արևելքի սոցիալ-տնտեսական կյանքը լուսաբանող վավերագրերի շարքին են պատկանում։

1) Որենքների ժողովածուները.—Ամենահինը պետք են համարել սումմերական որենքները, վորոնք հայտնաբերվել են վերջին տարիները և մեղ հասել են առայժմ վոչ լրիվ չափով։ Այնուհետև գալիս են չամմուրապիի որենքները (2067—2025 թ. թ. մեր թվարկ. առաջ), վորոնք ներկայացնում են հին Բարելոնի իրավաբանական հարաբերությունները։ Ամենահետաքրքր քերը հեթիթական որենքներն են, վորոնք հայտնաբերվել են Բողոքադրյոյի հնագիտական պեղումներով և վերագրվում են 14-րդ դարին (մեր թվարկ. առաջ)։

2) Գործարքային շրջանառումների պայմանագրեր, գնման ու վաճառքի պայմանագրեր, նվիրաբերությունների՝ ակտեր, աշխարհիկ ու մեհենական կալվածատիրական տնտեսությունների յելեմտային հաշիվներ և այլն։

3) Քաղաքներին, մեհյաններին ու առանձին անձերին թագավորների կողմից շնորհված արտոնագրություններ, նմանապես հոգային սահմանագրությունների՝ ակտեր, աշխարհիկ ու մեհենական կալվածատիրական տնտեսությունների յելեմտային հաշիվներ և այլն։

4) Շինարարական արձանագրություններ թեթագավորների և թե տիրապետող իշխանների կամ ազնվականների կողմից։

Բազմաթիվ են այն վավերագրերը, վորոնք լուսաբանում են Արևելքի հասարակությունների մտավոր ու հոգեւոր կուլտուրան։ Այսուեղ հարկ են հիշատակել Բարելոնից, Ասորեստանից, Յեգիպտասից, վերջերս մասամբ ել հեթիթներից և Փյունիկիայից մեզ հասած ու հայտնաբերված կրոնական-աստվածածաբանական

բնույթի գրական յերկեր։ Սրանք մյութաբանական (դիցաբանական) ու ծիսա-պաշտամունքային տեկստեր հն, աստվածություններին նվիրած ձոներ ու աղոթքներ, մոգական և դյութական ասույթներ, նզովումներ ու անհծքներ և այլն, վորոնք պատկերացնում են հին Արևելքի հասարակությունների գաղափարախոսությունները։

Այդ գրավոր հուշարձաններին պետք է կցել նաև գեղարվեստական գրականության ու գիտական յերկերը։ Բարեկոնից մեզ հասել են վիպական զանազան հատվածներ, Յեգիպտոսից՝ կախարդական հեքիաթներ ու Փանտաստիկ ձանապարհորդություններ, Բաբելոնի քուրմերը մեզ թողել են աստղաբաշխական զիտումների հաշվառումներ, Յեգիպտոսից մենք ունենք բացի աստղաբաշխական զիտումներից նաև մաթեմատիկական ու բժշկակական ժողովածումներ։

Այս բոլոր վավերագրերը մեզ հասել են, նայած յերկը տեղական բնական պայմաններին, կամ ժայռերի ու առանձին վեժաքարերի (ստել) վրա փորագրված, ինչպես Իրանում և Հայաստանում, կամ կավե թրծած աղյուսների վրա գրոշված, ինչպես Միջագետքում ու Յեգիպտոսում, կամ պապիրուաների վրա գրը ված, գլխավորապես Յեգիպտոսում։ Պապիրուս եր կոչվում այն թղթանուան նյութը, վորի վրա կարելի յեր գրել։ Պապիրուս՝ հունարենացրած յեգիպտական բառեր, վոր նշանակում է «գետի նվեր»։ Պապիրուսը պատրաստվում եր նեղոսի ջրերում աճող յեղեցնից, վոր նույնպես կոչվում եր պապիրուս, գլխավորապես նրա միջուկի բարակ շերտերից։ Իր սկզբնական ձեռվ պապիրուսը վորոշ չտփով նման եր մեր այժմյան թանձը ու պինդ, գեղնավուն թըղթին։

## V.

### Նյութական կուլտուրայի նույարձաններ

Վերոհիշյալ արձանագրությունները հաճախ ուղեկցվում են բարձրագանգտակ նկարներով, վորոնք իրենց արվեստով պատկանում են նյութական կուլտուրային։ Այստեղ առաջին հերթին պետք է հիշատակել կլանները, վորոնք ծառայում եյին իբրև կնիք, յերբեմն ել իբրև համայիլ կլանները պատրաստվում

եյին թանգարին քարերից, վորոնց վրա քանդակված եյին լինում  
նրանց տերերի անունները, նաև կրօնական ընույթի նկարներ։  
Անունը զբոշմելու համար այդ կլանը ձնշելով վլորում եյին փա-  
փուկ և զեռ չցամաքաց կավե աղյուսի վրա։ Յեգիպտոսում  
ել գործածվում եյին կլաններ, վորոնք սակայն հետագայում  
փոխարինվում եյին հատուկ ֆիգուրներով, վորոնք կոչվում են,  
սկարաբեյ, զրանք զանազան մեծության բգեցների ֆիգուրներ  
եյին, վորոնց փորի վրա քանդակվում եյին համապատասխան  
մակագրեր։

Նյութական կուլտուրայի հուշարձանների մասին, վորպես  
հնագիտական աղբյուրների, առիթ ունեցանք արդին վերը ման-  
րամասն խոսելու։ Այսուղի նշենք միայն մի քանի կարեռը կե-  
տեր։ Մի կողմ թողած քաղաքների, ամրոցների, պալատների  
և այլն շենքերի ավերակները, վորոնք վկայում են հին Արեել-  
քի ճարտարապետության ու կառուցողական տեխնիկայի բարձր  
զարգացման աստիճանը, մեզ հասել են չափազանց հարուստ իրե-  
զեն հուշարձաններ, վորոնք ներկայացնում են հին Արեելքի  
հատարակության ներքին կենցաղը։ Հին Յեգիպտոսը թողել և  
մեզ մեճենական պաշտամունքի ու թաղման ծեսերի մեծաքանակ  
երեր։ Յեգիպտական հոչակավոր դամբանները պարունակում են  
այն ասենն, ինչ վոր այդտեղ թաղվածներն ոգտագործում եյին  
երենց կենդանության ժամանակ—կանկարասի, հագուստ, գոր-  
ծիքներ, զենքեր, գրենային պատկանելիքներ և նույն իսկ զբա-  
վոր հուշարձաններ (պապիրուսներ)։ Բարեկաստանի, Իրանի և  
ընդհանրապես Առաջավոր Ասիայի ավերակներում պահպանված  
շենքերի և մանավանդ հին Յեգիպտոսի դամբանների պատերին  
գտնում ենք քարձբաքանդակ, մողայիկ նաև գունաներկ նկարներ,  
վորոնք պատկերացնում են տեղական կենցաղային տեսարան-  
ներ ու սովորություններ։ Յեգիպտական նկարներում նույն իսկ  
արտացոլում են նրա սոցիալ-տնտեսական կյանքը, այն և՝ գյու-  
ղացիական յերկրագործական զանազան աշխատանքներ, արհեստ-  
ների զանազան ձյուղեր, արհեստավորների աշխատանքային  
գործողություններ, առետրական փոխանակություն, հարկահա-  
վաքություն, վորսորգական ու ռազմական տեսարաններ և  
այլն։

## Առաջավոր Ասիայի պատմագրության զարգացումը

Այն հարուստ նյութը հին Արևելքի պատմության վերաբերմամբ; Վոր կուտակվել եր 19-րդ դարի յերկորդ կեսին հնագիտական պեղումների ու հետախուզական արշավանքների հետեւանքով, մեծ զարկ տվեց արևելագիտության զարգացմանը: Արևելյան Յեվրոպայում բուրժուական պատմագիտությունը մեծ թափով սկսեց ուսումնախրել այդ հարուստ նյութերն ու նրանց հիման վրա շարահյուսել փաստերով ճոխ ու միծահատոր, մանրակրկիտ բովանդակությամբ պատմություն հին Արևելքի մասին: Այս պատմագետների մեջ աչքի յին ընկնում գերմանացի եղ. Մայերն ու Քրանսիացի է. Մասմիրոն, վորոնք իրենց պատմական աշխատառություններում տալիս են նաև հին Արևելքի պատմության զարգացման թերթեալիկ լուսաբանությունը: Այդ կողմից նշանավոր ե Եղ. Մայերի կոնցեպցիան, վոր կանգնած ե այսպես կոչված ցիկլիկ թեորիա յի վրա: Ցիկլիկ թեորիան— պատմական շրջապատույտների տեսությունն եւ Ըստ Եղ. Մայերի՝ պատմական զարգացումը մի շրջագիծ ե, վորտեղ պատմական եպոխաների դինամիկան, շարժումը սահմանափակված ե. հնագույն քաղաքակրթությունների հասարակությունը, հասնելով զարգացման վորոշ աստիճանին, հիտ ե դառնում իր անցած նախկին ետապները: Որինակ՝ գոյանում ե առնտիկ» հասարակություն իր տոհմային ձեռում, այնուհետեւ նա անցնում ե ֆեոդալական շրջան և ապա մտնում կապիտալիստական շրջան և վերջապես ներքուստ հյուծվելով, քայլայլում, կործանվում ե, վերջացնելով իր զարգացման մի ցիկլը, շրջագիծը, վորպեսզի յեվրոպակական ցիկլում՝ շրջագծում նորից սկսի իր շրջապատույտը, այն ե՝ հասարակությունը վերստին սկսում ե անցնել տոհմային շրջանը, Փեոդալական, կապիտալիստական և այն:

Եղ. Մայերն անտիկ աշխարհի հասարակության կործանումը բացարում ե կուլտուրական այլասերման որինաչափական պրոցեսով. ներքին քայլայիշ հեղաշըման փոխարեն նա ճանաչում ե միայն քաղաքակրթության ներքին այլասերություն:

Անտիկ աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության վերաբերյալ ուսումնասիրություններում եղ. Մայերն իր պատմական կոնցեպցիան մողեռնացնում է, արդիականացնում և ձգտում է ապացուցել, վոր անտիկ աշխարհի տնտեսության զարգացումը միանգամայն հոմանիշ է արդի կապիտալիստական տնտեսությանը և վոր ստրկության դերն իր աշխատանքի ձեռվ վոչ թե տիրապետող, այլ մրցողական նշանակություն և ունեցել ենչպես ներկա կապիտալիզմի պայմաններում. Այստեղ եղ. Մայերը ակնհայտնի պաշտպանում է կապիտալիզմի հնագույն գոյության ու մշտնջենականության գաղափարը. Նույն տեսակետով և նա մոտենում նաև հին Արևելքի պատմությանը, վորտեղ կապիտալիզմի մշտնջենականությունը նա կապում է Արևելքի մշտնջենական հետամնացության ու անփոփոխության կոնցեպցիայի հետ: Նրա կարծիքով Արևելքում տնտեսական հարաբերությունները մնում ենին իրենց եյական գծերով անփոփոխ հնագույն ժամանակներից մինչև մեր որերը. Այդ անշարժության ու անփոփոխության պատճառներն ըստ եղ. Մայերի կայանում են նրանում, վոր պատմական ասպարիզում յերեացող յուրաքանչյուր նոր ժողովուրդ ստիպված է հարմարվել իրենից առաջ ստեղծված պայմաններին, վորովհետև իր զարգացման մեջ ինքը սահմանափակված է «կուլտուրական շրջանների» սահմաններով:

Սա ինքնին ուեակցիոն մի տեսություն է, վորով ժխտվում է միասնական պրոցեսիվ պատմական զարգացման գաղափարը: Եղ. Մայերը և նրա հետևողգներն իրենց ցեղեղազմի թիորիայով լայն գոներ բացին Փաշիզմի գաղափարախոսության ու քաղաքականության առաջ, վորով այսոր համակվել և իր որհասական որերն ապրող բուրժուազիան, տեսնելով իր գեմ ծառացող պրոլետարիատի հաղթական ընթացքը. Բուրժուազիան չի ուզում ճանաչել պատմական պրոգրեսը և հեռու յե վանում իրենից այդ տեսությունը: Յեթե նա ընդունի անզագար պրոգրեսի սկզբունքը՝ զա նշանակում և ընդունել նաև բուրժուազիան հասարակության վերջավորությունը, կապիտալիզմի վերացումը, մի սարսափելի հեռանկար, վոր դրդում է բուրժուազիային թշնամանքով լցվել գեպի մարքսիստական պատմագիտությունը և նրա առաջատար գործոնի՝ պրոլետարիատի դեմ: Ուստի զարմանալի

չե, վոր արդի բուրժուական պատմագրությունն ամբողջովին տոգորվել և ոհակցիոն ու հակապրոլետարական սկզբունքներով:

Այդ տեսակետից խիստ բնորոշ և եմիգրացիայում գտնվող ուսու պըռփ. Մ. Ռուտովցել մանավանդի վերջին անգլիերեն խոշոր աշխատությամբ, վոր կրում և «Հռոմեյական կայսրության սոցիալ-տնտեսական պատմությունը» խորագիրը, Առաջ բերենք այդ աշխատությունից մի պարբերություն, վոր ցայտուն կերպով դրսեվորում եցիլիզմի թեորիայով տարված մի գիտնականի ոհակցիոն պատմական կոնցեպցիան: «Հին աշխարհի եվոլյուցիան մեղ մի դաս և ու նախազգութացում: Մեր քաղաքակըրթությունը չի պահպանվի, յեթե նա դառնա սոսկ մի դասակարգի և վաչ թե մասսայական քաղաքակըրթություն: Արևելյան քաղաքակըրթությունն ավելի կայուն ու մշտատե եր, քան թե Հույն-հռոմեյականը, զիմավորապես այն պատճառով, վոր նա հիմնված լինելով կրօնի վրա, ամելի մոտ եր մասսաներին: Մի ուրիշ գասն այն ե, վոր համահարթման (հիւելլիրօվանե) բռնիք միջոցները յերբեք չեյին նպաստում մասսաների բարձրացնար: Նրանք վոչնչացնում եյին ստորին դասակարգերը և այդ ետևանքով արագանում եր բարբարոսացման պրոցեսը»:

Եղ. Մայերից առաջ Արևելքի անշարժության մասին արտապատվել եյին այնպիսի խոշոր արեկելագետներ, ինչպես Գ. Մասլերոն և Ա. Երմանը: Սրանք պաշտպանում եյին այն թեորիան, որ հին Արևելքի հասարակությունը մեկուսացած եր այլ ժողուուրդների ու հետնագույն դարաշրջանների պատմական դարացումից, վոր Յեղիպատոսի, Ասորեստանի, Բաբելոնատանի և արեւելյան այլ յերկրների պատմությունը միանգամայն ինքնուրույն և ինքնարավ և և չի ունեցել ուրիշ որինակ կամ նախատիպ մբողջ համաշխարհային պատմության մեջ:

Այդ ցիլիզմի տեսաբանության հիման վրա Գերմանիայում ի շարք ականավոր արևելագետներ, ինչպես Գ. Վինկլեր, Գ. Էնսեն, Ֆ. Հոմմել և այլք, ստեղծել եյին այսպես կոչված «Հաւաբերելականության» (պանբարելոնիզմ) թեորիան: Այդ տեսության համաձայն՝ ամբողջ համաշխարհային կուլտուրան ծանել ու զարգացել եաբելոնի կուլտուրայից: «Համարբերականությունը» պաշտպանում եր այն կարծիքը, վոր Բաբելոնի կուլ-

տուրան առաջացել եր հնագույն ժամանակները Սումմերում է ապա հետագայում կանգ ե առնում իր զարգացման մեջ: Սումմերներից այդ կուլտուրան յուրացնում են բարելական սեմիտաները, վորոնք, այդ արգեն պատրաստի կուլտուրան, իրենց կողմից այլ ևս չեն զարգացնում: Բարելական սեմիտների պատմական ծառայությունն իրը թե կայանում ե նրանում, վոլնբանք, սումմերական կուլտուրան դարձնելով բարելական, տարածում են այն ժամանակվա ամբողջ աշխարհում վորպիտում կուրպիտ սումմերականից բղնած, վորից կախումն ունեն մյուս բոլոր կուլտուրաները:

Պանբարելոնիդմը, կամ համարաբելականությունը, ծագել ե անշուշտ, այսպիս կոչված «պանդերմանիզմի» (համագերմանականության) գաղափարների ազգեցության ներքո, յերբ Գերմանիան, տակավին համաշխարհային պատերազմից առաջ, տարվե իր իմպերիալիստական ակտիվ քաղաքականությամբ և ծրագրում եր վոչ միայն գործոն գեր խաղալ Յելքոպայում, այլ և Առաջավոր Ասիան դարձնել իր գաղութթային եքսպանսիայի կենտրոն Համարաբելականությունը մի հակագիտական տեսություն և Այստեղ արծարձվում ե պատմությանն անհարիր մի կոնցեպցիա վոր իրը թե սումմերական կուլտուրան գոյացել ե պատրաստ ձեռվ և այնուհետեւ չի շարունակել զարգանալ Իսկ սումմերակա այդ կուլտուրայի անփոփոխ յուրացումը բարելական սեմիտներ կողմից բացատրվում ե սոսկ մեխանիստորիեն, առանց հաշվի առնելու այն պատմական պայմանները, վորոնք այս կամ այն կեր նպաստել են յերկու հարեւան կուլտուրաների փոխագարձ հարաբերությունների և ազգեցությունների զարգացմանը: Բացի այն համարաբելականության թեորիայի հիմնագիրներն ու պաշտպանները վորոշ տուրք եյին տալիս նաև իմպերիալիստական Գելմանիայում հարահրվող հակասեմիտականությանը, վոր իրը ի բարելոնյան սեմիտները վոչինչ ինքնուրույն ու սեփական չ ստեղծագործել, այլ միայն կուրորեն յուրացրել են սումմերներ կուլտուրան, վորոնք իրը թե արիական ցեղ եյին հանդիսանու

Զանյած այդ թերթետիկական ու մեթոդաբանական տես կիաների մեջ համար անընդունակի բովանդակության, այնուամ նայանիվ պետք ե խոստովանել, վոր Արևետյան Յելքոպայի արվելագիտ պատմաբանները, ինչպիս Մասովերոն ու եղ. Մայեր

տվել են հին Արևելքի պատմության վերաբերյալ ամբարված տվյալների ու հարուստ փաստերի ամբողջական ու ամփոփ շարաշ հյուսություն, գրված կենդանի ու պատկերավոր վոճով։ Բացի վերոհիշյալներից, հայոնի յեն անգլիական ասորագետ Կինդի «Յարելոնի պատմությունը» և ամերիկական յեգիպտագետ Բրեստետի յեռահատոր «Յեգիպտոսի պատմությունը», վորոնք ուշագրավ են իրենց ճոխ փաստական նյութերով։

Մուսասատանում Արևելագիտությանը մասնակից յիշան իրենց լուրջ աշխատություններով Ո. Լեմմը, Վ. Գոլենիչչը և մանավանդ Բ. Տուրայեր, վորին պատկանում են արժեքավոր ու փաստերով հարուստ պատմագիտական յերկեր՝ «История древнего Востока» (յերկու հատոր) և «Классический Восток»։ Սակայն իրենց տեսաբանությամբ վերջինները կանգնած են յեզրոպական բուրժուական պատմագիտության հիմքերի վրա։

Խորհրդային Մուսասատանում նորանոր և սկսվում հին Արևելքի պատմության ուսումնասիրությունը մարքսիստական մեթոդոլոգիայով, վորով, ի հարկ և, միանգամայն այլ բուրժուական պատմագիտությանը հակադիր տեսակետներ են հիմնավորվում։ Խորհրդային Մուսասատանում առաջացած յերիտասարդ գիտնականներին, վորոնք զբաղվում են հին Արևելքի պատմությամբ, գլխավորում են ակադեմիկոս Վ. Ստրուվին, վորն իր մի շարք աշխատություններում արծարծում են հին Արևելքի սոցիալ-տնտեսական ֆորմացիաների հարցը և ուսումնասիրում են հին Արևելքի հասարակությունների զարգացման հիմնական ուղիները մարքուլենինյան պատմահայեցողությամբ։

## VII

### Ժամանակագրություն

Հին Արևելքի պատմության ժամանակագրական սահմանները վորոշելու հարցը տեղիք և տվել տարբեր ու հակասական կարծիքների։ Զմտնելով այդ կարծիքների քննության մեջ, կարելի յետք ժամանակագրությունը մոտավորապես գծել այսպես Հին Արևելքի հասարակությունների մեծ մասի պատմության ոկիզը կորած և այնպիսի հնության խորքերում, վոր

առայժմ հնարավոր չենը առանց տարեթվերը վորոշել նույնիսկ մոռավոր կերպով: Բացի այդ՝ հին Արևելքի ժողովուրդների պատմության սկիզբը յուրաքանչյուրի համար առանձին վերցրած միաժամանակ չի սկսվել: Ամենահինն ըստ ժամանակագրության պետք է համարել Բարելոնի ու Յեղիպտոսի պատմությունները:

Այլ բան և հին Արևելքի պատմության ժամանակագրության վերջնական սահմանը: Այն սահմանագիծը, զորակի հնարավոր և նկատել հին Արևելքի հասարակությունների պատմության վախճանը և պատմական մի նոր դարաշրջանի սկզբանավորումը՝ այդ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներն են: Այդ նվաճումների հետևանքով հին Արևելքում մուտք գործեց հելլենական կուլտուրան, զորն Արևելքի տեղական կուլտուրան դարձրեց հելլենական քաղաքակրթության հետագա զարգացման ասպարեզը: Արևելյան ու հելլենական կուլտուրաների խաչաձեռնով և նույնիսկ համաձայնով՝ հին Արևելքում առաջացավ մի նոր դարաշրջան, զոր հայտնի յե պատմության մեջ հելլենիստական կամ հելլենիստական ժամանակաշրջան հորչութումով: Այդ առումով հին Արևելքի պատմության ժամանակագրական վախճանը կարելի յե համարել 320 թվականը նախքան մեր թվարկությունը, յեթե ի նկատի ունենանք, զոր Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներն ու թագավորությունը տևեց 336—323 թ. թ.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Тураев, Б. А.—История древнего Востока, т. I, стр. 1—58.
2. История древнего мира, т. I, Древний Восток, под ред. Ковалева. 1937 г. стр. 20—48.
3. В. Струве.—История древнего Востока. 1934, Москва, стр. 15—28.




ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0465538

(104)  
ԳԻՒՐ 80 Կ.

450



Прос. 15

Проф. Խ. Սամվելյան  
ИСТОРИЯ ДРЕВН. ВОСТОКА  
Выпуск II  
Заочный отдел Педагогического Института  
Арм. ССР, Ереван, 1938